

Համեմատական առավելություններ հարցեր և խնդիրներ

➤ 1. Համեմատական առավելության սկզբունքը: Համաշխարհային արտադրական հնարավորությունների սահմանը:

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

- Համեմատական առավելության երկու սահմանումների բացատրությունը և դրանց համարժեքության ցուցադրումը:
- Համեմատական առավելության սկզբունքով մասնագիտացման դեպքում համաշխարհային արտադրության ընդլայնման ցուցադրումը:
- Համաշխարհային արտադրական հնարավորությունների սահմանի կառուցումը և ցուցադրումը, որ այն ավելի մեծ ծավալ ունի համեմատական առավելության սկզբունքով մասնագիտացման դեպքում:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ո՞ր երկիրը ո՞ր ապրանքում ունի համեմատական առավելություն և ինչու, երբ $a_1 = 3$, $a_2 = 4$, $a_1^* = 9$, $a_2^* = 8$: Երկրներն են Հայաստանն ու Իրանը, ապրանքներն են շապիկն ու դուլը, a -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է:

Պատասխան

Միավոր անհրաժեշտ աշխատանքը.

	շապիկ	դուլ
Հայաստան	3	4
Իրան	9	8

Շապիկի արտադրության այլընտրանքային ծախսն արտահայտված դուլով Հայաստանում $3/4=0.75$ է, Իրանում՝ $9/8=1.125$: Ըստ սահմանում 2-ի

երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի արտադրությունում, որի արտադրության այլընտրանքային ծախսն այլ երկրի համեմատ փոքր է:

Քանի որ Հայաստանում շապիկի այլընտրանքային ծախսը Իրանի համեմատ փոքր է, ապա Հայաստանը համեմատական առավելություն ունի շապիկի արտադրությունում:

Նմանապես Իրանում դուլի այլընտրանքային ծախսը փոքր է Հայաստանի համեմատ.

$8/9=0.8(9) < 4/3=1.3(4)$, ուստի Իրանը համեմատական առավելություն ունի դուլի արտադրությունում:

Միևնույնը կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ.

Հայաստանը բացարձակ առավելություն ունի և՛ շապիկի, և՛ դուլի արտադրությունում, բայց շապիկի արտադրությունում Հայաստանը Իրանի համեմատ արտադրողական է $9/3=3$ անգամ, իսկ դուլի արտադրությունում՝ $8/4=2$ անգամ:

Ըստ սահմանում 1-ի

երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի արտադրությունում, որում իր բացարձակ առավելությունն ավելի մեծ է կամ բացարձակ թերառավելությունն ավելի փոքր է, այսինքն՝ այն ապրանքի արտադրությունում, որում համեմատաբար ավելի արտադրողական է, կամ համեմատաբար պակաս թերարտադրողական է:

Քանի որ Հայաստանը շապիկի արտադրությունում համեմատաբար ավելի արտադրողական է (նույնն է՝ շապիկի արտադրությունում Հայաստանի բացարձակ առավելությունը ավելի մեծ է), ապա Հայաստանը համեմատական առավելություն ունի շապիկի արտադրությունում:

Նմանապես Իրանը բացարձակ թերառավելություն ունի և՛ շապիկի, և՛ դուլլի արտադրությունում, բայց դուլլի արտադրությունում նրա բացարձակ թերառավելությունը ավելի փոքր է, ուստի՝ Իրանը համեմատական առավելություն ունի դուլլի արտադրությունում:

Նշենք՝ երբ դիտարկում ենք երկու երկիր և երկու ապրանք, ապա եթե մի երկիրը համեմատական առավելություն ունի մի ապրանքում, ապա մյուս երկիրն անհրաժեշտաբար համեմատական առավելություն ունի մյուս ապրանքում:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ո՞ր երկիրը ո՞ր ապրանքում ունի համեմատական առավելություն և ինչու, երբ $\delta_1 = 0.2$, $\delta_2 = 0.5$, $\delta_1^* = 0.1$, $\alpha_2^* = 0.04$, երկրներն են Հայաստանն ու Իրանը, ապրանքներն են շապիկն ու դուլլը, δ -ն արտադրողականությունն է:

Պատասխան

Ըստ սահմանման՝

Արտադրողականությունը միավոր աշխատանքի ներդրանքով թողարկված արտադրանքի քանակն է,

իսկ միավոր անհրաժեշտ աշխատանքը այն աշխատանքի քանակն է, որն անհրաժեշտ է ապրանքի մեկ միավորն արտադրելու համար

Հետևաբար՝ միավոր անհրաժեշտ աշխատանքը հավասար է արտադրողականության հակադարձին:

Օրինակ, երբ շապիկի արտադրությունում արտադրողականությունը 0.2 է, նշանակում է, որ միավոր աշխատանքի ներդրանքով թողարկվում է 0.2 միավոր շապիկ: Հաշվելու համար, թե մեկ շապիկի արտադրությունում քանի միավոր աշխատանք ռեսուրս է օգտագործվում՝ անհրաժեշտ է 1-ը բաժանել 0.2-ի: Կստանանք, որ շապիկի արտադրությունում միավոր անհրաժեշտ աշխատանքը 5 մարդ-ժամ է:

Միավոր անհրաժեշտ աշխատանքը.

	շապիկ	դուլլ
Հայաստան	$1/0.2=5$	$1/0.5=2$
Իրան	$1/0.1=10$	$1/0.04=25$

(շարունակությունը՝ ինչպես նախորդ հարցի պատասխանում)

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Կառուցեք համաշխարհային արտադրական հնարավորությունների սահմանը, երբ $\alpha_1 = 3$, $\alpha_2 = 6$, $\alpha_1^* = 8$, $\alpha_2^* = 8$, $L = 12$, $L^* = 16$: Երկրներն են Հայաստանն ու Իրանը, ապրանքներն են շապիկն ու դուլլը, α -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է, L -ը երկրում առկա աշխատանք ռեսուրսի քանակն է:

Պատասխան

Միավոր անհրաժեշտ աշխատանքը

	շապիկ	դուլլ	ռեսուրսի քանակ
Հայաստան	3	6	12
Իրան	8	8	16


Քանի որ շապիկի այլընտրանքային ծախսը Հայաստանում Իրանի համեմատ փոքր է ($3/6 < 1$), ապա Հայաստանը համեմատական առավելություն ունի շապիկի արտադրությունում (Իրանը՝ դուլլի արտադրությունում):

Համեմատական առավելությանը համապատասխան մասնագիտանալու դեպքում Հայաստանը կարող է արտադրել 4 շապիկ, Իրանը՝ 2 դուլլ:

Համեմատական առավելությանը հակառակ մասնագիտանալու դեպքում Հայաստանը կարող է արտադրել 2 դուլյ, Իրանը՝ 2 շապիկ:

Գրաֆիկում ցույց է տրված, թե համեմատական առավելությանը համապատասխան և հակառակ մասնագիտանալու դեպքում երկրի արտադրական հնարավորությունների սահմանը:

Համաշխարհային արտադրական հնարավորությունների սահմանը



2. Միագործոն տնտեսության մոդելը

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

- Մոդելի նախապայմանների նկարագրությունը:
- Արտադրական հնարավորությունների, հարաբերական գների և առևտրի վերլուծությունը:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Որքա՞ն կարող է կազմել կոնյակի ու տաբատի միջազգային հարաբերական գինը, երբ $a_1 = 2$, $a_2 = 3$, $a_1^* = 5$, $a_2^* = 6$: Երկրներն են Ֆրանսիան ու Չինաստանը, ապրանքներն են կոնյակն ու տաբատը, a -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է:

Պատասխան

Միավոր անհրաժեշտ աշխատանքը

	կոնյակ	տաբատ
Ֆրանսիա	2	3
Չինաստան	5	6

Քանի որ կոնյակի արտադրությունում Ֆրանսիայի բացարձակ առավելությունն ավելի մեծ է, ապա Ֆրանսիան համեմատական առավելություն ունի կոնյակի արտադրությունում ($2/5 < 3/6$):

Ազատ առևտրի դեպքում Ֆրանսիան կարտահանի կոնյակ, Չինաստանը՝ տաբատ: Բայց միջազգային հարաբերական գինը պետք է գտնվի ավտարկիայի հարաբերական գների միջակայքում: Քանի որ առկա է մեկ ռեսուրս, ապա

$$p_k = w_k a_k, \quad p_m = w_m a_m$$

Քանի որ համարում ենք, որ աշխատանք ռեսուրսը համասեռ է, ապա երկրի ներսում այն կատարյալ շարժուն է: Ուստի աշխատավարձը երկրի ներսում երկու ապրանքների արտադրությունում կլինի նույնը:

$$w_k = w_m \equiv w$$

Հետևաբար՝

$$p_k = w a_k, \quad p_m = w a_m$$

Որից էլ հետևում է՝ ավտարկիայի հարաբերական գինը հավասար է այլընտրանքային ծախսին.

$$\frac{p_l}{p_m} = \frac{a_l}{a_m}$$

Ունենք՝ կոնյակի այլընտրանքային ծախսը Ֆրանսիայում $2/3=0.67$ է: Ուստի՝ կոնյակի միջազգային հարաբերական գինը դրանից բարձր պետք է լինի: Բայց եթե այդ գինը բարձր լինի նաև $5/6=0.83$ -ից, Չինաստանին շահեկան չի լինի:

Այսպես՝ կոնյակի 0.83 -ից բարձր հարաբերական գինը նույնն է, ինչ տաբատի $1/0.83=1.2$ -ից ցածր հարաբերական գինը: Բայց ավտարկիայում տաբատի հարաբերական գինը Չինաստանում 1.2 է, և Չինաստանը 1.2 -ից ցածր հարաբերական գնով տաբատ չի արտահանի:


Այսպիսով՝ կոնյակի միջազգային հարաբերական գինը պետք է գտնվի $(2/3, 5/6)$ միջակայքում, իսկ տաբատի միջազգային հարաբերական գինը՝ $(6/5, 3/2)$ միջակայքում:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Կառուցեք երկրների արտադրական հնարավորությունների սահմանները և պարզեք համեմատական առավելության ապրանքները, երբ $a_1 = 2$, $a_2 = 3$, $a_1^* = 10$, $a_2^* = 6$, $L = 12$, $L^* = 30$: Ապրանքներն են բամբակը և ծխախոտը, երկրներն են Չադը և Տանզանիան: a -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է: L -ը երկրում աշխատանք ռեսուրսի առկա քանակն է:

Պատասխան

Ունենք, որ $a_p q_p + a_s q_s = L$: Հետևաբար՝ Չադի համար $2q_p + 3q_s = 12$: Համանմանորեն Տանզանիայի համար՝ $10q_p + 6q_s = 30$: Համապատասխան գծապատկերներն են:



Չադում բամբակի այլընտրանքային ծախսը Տանզանիայի համեմատ փոքր է $(2/3 < 5/3)$, ուստի Չադը համեմատական առավելություն ունի բամբակի, իսկ Տանզանիան՝ ծխախոտ արտադրությունում:


Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Կոնգոն և Ջամբիան արտադրում են պղինձ և բամբակ: Միավոր անհրաժեշտ աշխատանքը Կոնգոյում համապատասխանաբար 2 և 3 է, իսկ Ջամբիայում՝ 4 և 9: Ենթադրենք դեկարտյան կոորդինատների հորիզոնական առանցքը պղինձի քանակն է: Ո՞ր երկրի արտադրական հնարավորությունների սահմանն է համեմատաբար ավելի հարթ:

Պատասխան

Ջամբիայի դեպքում արտադրական հնարավորությունների սահմանի թեքությունը $4/9=0.44$ է, իսկ Կոնգոյի դեպքում $2/3=0.66$ է:

Այսինքն՝ Ջամբիայում արտադրական հնարավորությունների սահմանն ավելի հարթ է:



3. Միջազգային հարաբերական գնի որոշումը հարաբերական առաջարկի և հարաբերական պահանջարկի միջոցով:

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

- հարաբերական առաջարկի և հարաբերական պահանջարկի սահմանումը և գրաֆիկների կառուցման նկարագրությունը,
- գրաֆիկների հատման երկու տարբերակների վերլուծությունը, երբ միջազգային հարաբերական գինը գտնվում է ավտարկիայի հարաբերական գների միջակայքում, և երբ հավասար է դրանցից մեկին:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով


Որքան կկազմի պղնձի միջազգային հարաբերական գինը և արդյո՞ք երկրները լիովին կմասնագիտանան, երբ $a_1 = 4.5$, $a_2 = 3$, $a_1^* = 5$, $a_2^* = 2$, $L = 45$, $L^* = 16$: Երկրներն են Բոթսվանան և Զիմբաբվեն, ապրանքներն են պղինձն ու կակաոն: α -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է:

Միջազգային հարաբերական պահանջարկն է՝

$$2.5 \times \frac{\text{կակաոյի միջազգային պահանջարկ}}{\text{պղնձի միջազգային պահանջարկ}} = \frac{\text{պղնձի միջազգային գին}}{\text{կակաոյի միջազգային գին}}$$

Պատասխան

Պղնձի այլընտրանքային ծախսը Բոթսվանայում $4.5/3=1.5$ է, իսկ Զիմբաբվեյում $5/2=2.5$ է: Հետևաբար՝ Բոթսվանան համեմատական առավելություն ունի պղնձի, Զիմբաբվեն՝ կակաոյի արտադրությունում: Համապատասխան գծապատկերն է



Պղնձի հավասարակշիռ միջազգային հարաբերական գինը 2 է: Քանի որ այն գտնվում է ավտարկիայի հարաբերական գների միջակայքում, ապա երկրները լիովին մասնագիտանում են այն ապրանքի արտադրությունում, որում համեմատական առավելություն ունեն: Պղնձի միջազգային հարաբերական առաջարկը կկազմի 1.25:


Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

(Նախորդի շարունակություն) Ենթադրենք Բոթսվանայում աշխատանք ռեսուրսի քանակն ընդլայնվում է՝ նախ $L = 54$, հետագայում՝ $L = 90$: Ինչպե՞ս դա կազդի միջազգային հարաբերական գնի և մասնագիտացման վրա:

Պատասխան


Երբ $L = 54$, պղնձի միջազգային հարաբերական գինը դառնում է 1.67, որը նախկինի համեմատ ավելի մոտ է Բոթսվանայում ավտարկիայի հարաբերական գնին: Նոր իրավիճակում պղնձի միջազգային հարաբերական առաջարկը 1.5 է:

Երկրները կշարունակեն լիովին մասնագիտանալ այն ապրանքի արտադրությունում, որում ունեն համեմատական առավելություն:



Երբ $L = 90$, պղնձի միջազգային հարաբերական գինը հավասարվում է Բոթսվանայում պղնձի ավտարկիայի հարաբերական գնին: Զիմբաբվեն ամբողջովին կմասնագիտանա կակաոյի արտադրությունում, իսկ Բոթսվանան կարտադրի և՛ պղինձ, և՛ կակաո: Երկու երկրներն էլ արտադրում են կակաո, քանի որ կակաոյի միջազգային հարաբերական պահանջարկը համեմատաբար բարձր է:

Պղնձի համաշխարհային հարաբերական առաջարկը 1.67 է:



4.1. Ազատ առևտրի և բարեկեցություն միջև կապը իրական աշխատավարձի միջոցով:

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

իրական աշխատավարձի սահմանումը, իրական աշխատավարձի հաշվարկը ավտարկիայում և ազատ առևտրում ու դրանց համադրումը:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Հաշվեք իրական աշխատավարձը ավտարկիայում և ազատ առևտրի դեպքում, երբ $a_1 = 2, a_2 = 3, a_1^ = 5, a_2^* = 6, w = 12, w^* = 5, p_1^{միջ} = 20, p_2^{միջ} = 25$: Երկրներն են Հայաստանն ու Վրաստանը, ապրանքներն են աղն ու հացը, a -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է, w -ն աշխատավարձն է, $p^{միջ}$ -ն ապրանքի միջազգային գինն է:*

Պատասխան

Միավոր անհրաժեշտ աշխատանքը

	աղ	հաց
Հայաստան	2	3
Վրաստան	5	6

Աղի այլընտրանքային ծախսը Հայաստանում փոքր է, քան Վրաստանում՝ $2/3 < 5/6$, և Հայաստանը համեմատական առավելություն (ՀԱ) ունի աղի արտադրությունում:

Ապրանքի գինը հավասար է աշխատավարձի և միավոր անհրաժեշտ աշխատանքի արտադրյալին:

Ավտարկիայի գները

	աղ	հաց
Հայաստան	24	36
Վրաստան	25	30

Իրական աշխատավարձը չուրաքանչյուր երկրում.

- արտահայտված ՀԱ ապրանքով հավասար է այդ ապրանքում արտադրողականությանը,
- արտահայտված ոչ ՀԱ ապրանքով հավասար է
 - (ավտարկիայում) ՀԱ ապրանքում արտադրողականության և ավտարկիայում ՀԱ ապրանքի հարաբերական գնի արտադրյալին,
 - (ազատ առևտրում) ՀԱ ապրանքում արտադրողականության և ՀԱ ապրանքի միջազգային հարաբերական գնի արտադրյալին:

Իրական աշխատավարձը ավտարկիայում

	արտահայտված	
	աղով	հացով
Հայաստան, ՀԱ ապրանքը աղ	$1/2 = 0.5$	$1/2 * (24/36) = 0.33$
Վրաստան, ՀԱ ապրանքը հաց	$1/6 * (30/25) = 0.2$	$1/6 = 0.17$

Իրական աշխատավարձը ազատ առևտրի դեպքում

	արտահայտված	
	աղով	հացով
Հայաստան, ՀԱ ապրանքը աղ	$1/2 = 0.5$	$1/2 * (20/25) = 0.4$
Վրաստան, ՀԱ ապրանքը հաց	$1/6 * (25/20) = 0.21$	$1/6 = 0.17$

Ավտարկիայում և ազատ առևտրի դեպքում իրական աշխատավարձերի համեմատումը ցույց է տալիս, որ Հայաստանում արտահայտված աղով այն մնացել է նույնը, իսկ արտահայտված հացով բարձրացել է: Նմանապես՝ Վրաստանում իրական աշխատավարձն արտահայտված հացով մնացել է նույնը, իսկ արտահայտված աղով բարձրացել է: Դրանով իսկ երկու երկրներն ազատ առևտրից շահում են:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ազատ առևտրի դեպքում որքա՞ն կարող է լինել անվանական աշխատավարձը Մեծ Բրիտանիայում (ՄԲ), երբ $a_1 = 2$, $a_2 = 3$, $a_1^* = 5$, $a_2^* = 6$, $w = 12$: Երկրներն են ԱՄՆ-ն ու ՄԲ-ն, ապրանքներն են գիրքը և վիսկին, α -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է, w -ն աշխատավարձն է:

Պատասխան

ՄԲ-ում անվանական աշխատավարձն այնքան պետք է լինի, որ երկու երկրների հարաբերական աշխատավարձը գտնվի հարաբերական արտադրողականուժյունների միջակայքում:

Միավոր անհրաժեշտ աշխատանքը

	գիրք	գրիչ
ԱՄՆ	2	3
ՄԲ	5	6
ԱՄՆ-ի հարաբերական արտադրողականուժյունը	$2/5=0.4$	$3/6=0.5$
ՄԲ-ի հարաբերական արտադրողականուժյունը	$5/2=2.5$	$6/3=2$

Քանի որ գրքի այլընտրանքային ծախսն ԱՄՆ-ում ՄԲ-ի համեմատ փոքր է՝ $2/3 < 5/6$, ապա ԱՄՆ-ը համեմատական առավելութուն ունի գրքի, իսկ ՄԲ-ն գրիչի արտադրութունում:

Քանի որ ՄԲ-ն 2-ից 2.5 անգամ թերարտադրողական է, ապա նրա աշխատավարձը պետք է 2-ից 2.5 անգամ ցածր լինի ԱՄՆ-ից: Այսինքն՝ այն պետք է գտնվի $12/2.5=4.8$ -ից $12/2=6$ տիրույթում:

Եթե ՄԲ-ում աշխատավարձը կազմի 8, ապա ՄԲ-ն գրիչ արտահանել չի կարող, քանի որ դրա բրիտանական գինը՝ $6*8=48$, կգերազանցի ԱՄՆ-ում արտադրված գրիչի գնին՝ $3*12=36$:

Իսկ եթե ՄԲ-ում աշխատավարձը կազմի 4, ապա ԱՄՆ-ն գիրք արտահանել չի կարող, քանի որ դրա ամերիկյան գինը՝ $2*12=24$, կգերազանցի ՄԲ-ում արտադրված գրքի գնին՝ $5*4=20$:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ազատ առևտրի դեպքում որքա՞ն կարող է լինել սուրճի միջազգային գինը, երբ $a_1 = 2$, $a_2 = 3$, $a_1^* = 5$, $a_2^* = 6$, $w = 12$, $w^* = 5$, $p_1^{\text{իջ}} = 20$, որտեղ երկրներն են Կոնգոն ու Զիմբաբվեն, ապրանքներն են մանգոն ու սուրճը, α -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է, w -ն աշխատավարձն է, $p^{\text{իջ}}$ -ն ապրանքի միջազգային գինն է:

Պատասխան

Միավոր անհրաժեշտ աշխատանքը

	մանգո	սուրճ
Կոնգո	2	3
Զիմբաբվե	5	6

Քանի որ մանգոյի այլընտրանքային ծախսը Կոնգոյում ցածր է՝ $2/3 < 5/6$, ապա Կոնգոն համեմատական առավելութուն ունի մանգոյի, իսկ Զիմբաբվեն՝ սուրճի արտադրութունում:

Ապրանքի գինը հավասար է աշխատավարձի և միավոր անհրաժեշտ աշխատանքի արտադրյալին.

Ավտարկիայի գները

	մանգո	սուրճ	ավտարկիայի հարաբերական գին	
			մանգո	սուրճ
Կոնգո	24	36	$24/36=0.67$	$36/24=1.5$
Զիմբաբվե	25	30	$25/30=0.83$	$30/25=1.2$

Միջազգային հարաբերական գինը պետք է գտնվի ավտարկիայի հարաբերական գների միջակայքում: Ուստի սուրճի միջազգային գինը պետք է լինի այնպիսին, որ

$$1.2 < \frac{p_{\text{սուրճ}}^{\text{միջ}}}{20} < 1.5$$

$$24 < p_{\text{սուրճ}}^{\text{միջ}} < 30$$

Եթե սուրճի միջազգային գինը նշյալ միջակայքից դուրս լինի, և օրինակ՝ լինի 20, ապա սուրճի միջազգային հարաբերական գինը կլինի $20/20=1$: Վերջինը շահեկան չէ Զիմբաբվեին, քանի որ այն ավելի ցածր է, քան ավտարկիայի գինը՝ 1.2:

Երբ սուրճի միջազգային հարաբերական գինը 1 է, ապա մանգոյի միջազգային հարաբերական գինը նույնպես 1 է:

Մանգոյի այդ գինը միանգամայն շահեկան է Կոնգոյին, քանի որ ավտարկիայի գինը Կոնգոյում 0.67 է: Բայց առևտուրը հնարավոր է միայն այն դեպքում, երբ շահեկան է երկու երկրներին միաժամանակ:

Եթե սուրճի միջազգային գինը կազմի 35, ապա սուրճի միջազգային հարաբերական գինը կլինի $35/20=1.75$: Այս գինն արդեն Զիմբաբվեին շահեկան է:

Բայց սուրճի 1.75 միջազգային հարաբերական գինը նույնն է, ինչ մանգոյի $1/1.75=0.57$ միջազգային հարաբերական գինը: Այդ գինն արդեն շահեկան չէ Կոնգոյին:

Այսպիսով՝ սուրճի միջազգային գինը պետք է գտնվի (24, 30) տիրույթում, որպեսզի առևտուրը շահեկան լինի երկու երկրներին միաժամանակ:

4.2. Ազատ առևտրի և բարեկեցության միջև կապը արտադրության և սպառման միջոցով:

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի


Ավտարկիայում և ազատ առևտրում արտադրության և սպառման որոշումը և դրանց համադրումը:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Որքա՞ն է ԱՄՆ-ի արտահանումը և ներմուծումը, և ինչպես է դրսևորվում ազատ առևտրից նրա շահը, երբ արտադրական հնարավորությունների սահմանն է $q_y = -3q_x + 10$, ավտարկիայում սպառման կետն է (2, 4), միջազգային հարաբերական գինն է $\frac{p_x}{p_y} = 2$, ազատ առևտրում սպառման կետն է (4, 2),

ապրանքներն են՝ $x \equiv$ ցորեն, $y \equiv$ օդանավ: Համարում ենք, որ (4, 2) կետը համապատասխանում է հասարակության անտարբերության ավելի բարձր կորի, քան (2, 4) կետը:

Պատասխան



Ավտարկիայում ԱՄՆ-ն արտադրում և սպառում է 2 միավոր ցորեն և 4 միավոր օդանավ:
 Քանի որ օդանավի միջազգային հարաբերական գինը $\frac{p_y}{p_x} = 0.5$, բարձր է ավտարկիայի հարաբերական գնից $\frac{1}{3} = 0.33$ (ավտարկիայի գինը արտադրական հնարավորությունների սահմանի թեքությունն է), ապա ազատ առևտրում ԱՄՆ-ն կմասնագիտանա օդանավի արտադրությունում:
 Քանի որ այլընտրանքային ծախսը հաստատուն է, ապա ԱՄՆ-ն լիովին կմասնագիտանա և կարտադրի 10 միավոր օդանավ ու զրո միավոր ցորեն:
 Հստ խնդրի պայմանի՝ ազատ առևտրի դեպքում ԱՄՆ-ն սպառում է 4 միավոր ցորեն և 2 միավոր օդանավ: Ուստի արտահանում է $10 - 2 = 8$ միավոր օդանավ, և ներմուծում է 4 ցորեն:
 Ազատ առևտրից ԱՄՆ-ն շահում է, քանի որ սպառման նոր կետը գտնվում է հասարակության անտարբերության ավելի բարձր կորի վրա:

4.3. Փոխանակումից և մասնագիտացումից ստացվող շահը:

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

Առևտրից ստացվող ընդհանուր շահի երկու բաղադրիչների՝ շահ փոխանակումից, շահ մասնագիտացումից, նկարագրությունը:


Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ցուցադրեք ԱՄՆ-ի շահի փոխանակումից և մասնագիտացումից, եթե արտադրական հնարավորությունների սահմանն է $q_y = -3q_x + 10$, ավտարկիայում սպառման կետն է (2, 4), միջազգային հարաբերական գինն է $\frac{p_y}{p_x} = 2$, ազատ առևտրում սպառման կետն է (4, 2), ազատ առևտրի դեպքում արտադրությունը չփոխելու դեպքում սպառման կետն է (3, 2), ապրանքներն են՝ $x \equiv$ ցորեն, $y \equiv$ օդանավ: Համարում ենք, որ (2, 4), (3, 2) և (4, 2) կետերը հաջորդաբար գտնվում են հասարակության անտարբերության ավելի բարձր կորերի վրա:

Պատասխան

Ավտարկիայում ԱՄՆ-ն արտադրում և սպառում է 2 միավոր ցորեն, և 4 միավոր օդանավ:
 Ազատ առևտրից ԱՄՆ-ն կշահի նույնիսկ արտադրությունը չփոխելու դեպքում: Այսպես՝ շարունակելով արտադրել (2, 4) կետում, ԱՄՆ-ն կարող է սպառել 3 միավոր ցորեն և 2 միավոր օդանավ, որը համապատասխանում է հասարակության անտարբերության ավելի բարձր կորի: Սպառման (2, 4)-ից (3, 2) անցումը կլինի փոխանակումից շահը:
 Բայց ազատ առևտրից առավելագույն օգուտ քաղելու համար ԱՄՆ-ն պետք է ամբողջովին մասնագիտանա այն ապրանքի արտադրությունում, որում ունի համեմատական առավելություն: Դա տվյալ դեպքում օդանավն է: Արտադրելով (0, 10) կետում՝ ԱՄՆ-ն կարող է սպառել (4, 2) կետում, որը համապատասխանում է հասարակության անտարբերության հնարավոր ամենաբարձր կորին:

Սպառման (3,2)-ից (4,2) անցումը կլինի մասնագիտացումից շահեր:



4.4. Հարաբերական աշխատավարձ: Համեմատական առավելությունների թյուրըմբռնումները

Հարցի լիարժեք բացատրությունը պետք է ներառի

1. հիմնավորումը, թե ինչու է երկրի մրցակցային առավելությունը կախված ոչ միայն հարաբերական արտադրողականությունից, այլև հարաբերական աշխատավարձից,
2. հիմնավորումը, որ առևտրի կառուցվածքը որոշվում է համեմատական առավելությամբ, իսկ աշխատավարձը՝ բացարձակ առավելությամբ (դասախոսության էջ 37)
3. մրցունակության և էժան աշխատուժի հետ կապված թյուրըմբռնումների մեկնաբանությունը:

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

Ազատ առևտրի դեպքում որքա՞ն կարող է կազմել անվանական աշխատավարձը Նեպալում, երբ $a_1 = 8$, $a_2 = 9$, $a_1^* = 12$, $a_2^* = 18$, $w = 10$, որտեղ երկրներն են Բոլիվիան ու Նեպալը, ապրանքներն են էլեկտրաէներգիան ու շաքարեղեգը, a -ն միավոր անհրաժեշտ աշխատանքն է, w -ն աշխատավարձն է:

(Նույն խնդիրը բացատրված է 4.1 կետում, պատասխանն է՝ $10/2=5$ -ից $10/1.5=6.67$ միջակայքում:)